

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

«ԹՈՒՄԱՆՅԱՆ—ՏԵՐՅԱՆ» ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ռ. Ա. ԻՇԽԱՆՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդեսի» 1970 թ. 2-րդ համարում տպագրված հոդվածի¹ իմանում ենք, որ հայտնվել է կարծիք այն մասին, թե Թումանյանն ու Տերյանը իբրև ստեղծագործողներ իրարից գրեթե չեն տարբերվում: Հոդվածի հեղինակը իր հերթին մանրամասն բացատրում է, որ Թումանյանն ու Տերյանը իրարից տարբեր գրողներ են, որ ամեն մի մեծ գրող ինքնատիպ է լինում և այլն: Հոդվածում ասված է նաև, որ, իբր Թումանյանին ու Տերյանին նույնացնողը տողերիս հեղինակն է:

Շտապում եմ ասելու, որ նման որևէ տեսակ նույնացում երբևիցե մրտ-բովս չի անցել:

Ահա հոդվածագրի խոսքերը. «Միայն վերջերս արհեստական զուգահեռների մեթոդը շոշափեց նաև Թումանյան և Տերյան պոռթկմը, և հայտնվեց այն միտքը, թե ճիշտ չէ Թումանյանին և Տերյանին ստեղծագործական տարբեր աշխարհների գրողներ, տարբեր պաթոսի բանաստեղծների դիտելը» (ՊԲՀ, 140): Այս նախադասությունից հղված ծանոթագրության մեջ նշված է իմ մի հոդվածը²: Ընդդիմախոսությունն ավարտվում է այսպես. «Ըստ էության ժրխտելով Թումանյանի: և Տերյանի «ինքնօրինակությունները», մի՞թե հոդվածագիրը նպատակ է դրել ապացուցել, թե նրանցից մեկը ինչ-որ չափով խոշոր չէ, կրկնող է: Չենք կարծում: Հոդվածագրին այդ ուղու վրա է դրել անպայման նոր բան ասելու, եղած կարծիքներին հակադրվելու կիրքը, իսկ կիրքը նման դեպքերում ճիշտ եզրակացության չէր կարող հանգեցնել» (ՊԲՀ, 157): Ամփոփման մեջ էլ ասված է, որ հոդվածումս երկու բանաստեղծները «գրեթե ամեն ինչով նույնացված են» (ՊԲՀ, 158): Այս ողով էլ գրածս քննադատվում է ամբողջ ընդդիմախոսության մեջ:

Միտք չունեմ հոդվածս պաշտպանելու: Գուցե այն վատն է: Բայց ինչպիսին էլ համարելու լինենք, իրողությունը, փաստն այն է, որ նրանում Թումանյանին և Տերյանին նույնացնելու, նրանց տարբերությունները ջնջելու որևէ փորձ չի արված և որևէ «կիրք» չի եղել այն գրելու շարժառիթը:

Թե որն է այդ շարժառիթը, կփորձեմ բացատրել ստորև, իսկ այժմ ստիպված եմ գոնե մի բանի քաղվածքով ցույց տալ, որ հոդվածումս ոչ միայն երկու բանաստեղծների տարբերությունները ջնջելու փորձ չի արված, այլ գուցե և հանրահայտ տարբերությունների մասին չափից շատ է գրված: Ահա. «Ամենաակնհայտ տարբերությունը, իհարկե, լեզվաոճական է: Այս դեպքում մենք

¹ Վ. Պարտիզոնի, «Թումանյան և Տերյան» պոռթկմի շուրջը, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 2, էջ 137—158 (այսուհետև՝ ՊԲՀ):

² «Թումանյան. ուսումնասիրություններ և հրապարակումներ», հատ. 2, Երևան, 1969, էջ 73—102 (այսուհետև՝ ԲՀ):

զործ ունենք իրարից տրամագծորեն տարբեր բանաստեղծների հետ» (ԹՂ, 82), «...դրանք (Թումանյանի և Տերյանի լեզվաոճական ուղղությունները—Ռ. Ի.) իրարից նկատելիորեն տարբերվող, փաստորեն հակադիր ուղղություններ են» (ն. տ., 83), «Երկու բանաստեղծների լեզվի բառապաշարի ամենաթեթև համեմատությունն անգամ նկատելի է դարձնում նրանց լեզվական մշակույթի տարբերությունները» (ն. տ.), «Լեզվական ոճի տարբերությունները հաճախ դառնում են գրական ոճին վերաբերող տարբերություններ, որոնք նույնպես նկատելի են երկու բանաստեղծների երկերում» (ն. տ.), «Երկու բանաստեղծների երկերին բնորոշ պատկերների տարբերությունների քննությունը մտորում է առաջ բերում նրանց գրական ուղղությունների վերաբերյալ» (ն. տ., 84), «...ինչ անուն էլ տալու լինենք Տերյանի և Թումանյանի գրական ուղղություններին, ակնհայտ է, որ նրանք իրարից շատ տարբեր են: Եվ դա երկու ստեղծագործողների կարևոր տարբերություններից է» (ն. տ.), «...Կարելի է թեմատիկ տարբերություններ նշել Թումանյանի և Տերյանի գործերի միջև, այն, որ մի դեպքում գերակշռում են գլուղական, մյուս դեպքում՝ փաղափայլն թեմաներն ու երանգները», «Կարևոր է նաև այն տարբերությունը, որ Թումանյանը քնարերգու բանաստեղծ լինելու հետ նաև մեծ վիպերգու է (էպիկ), հանդարտ պատմող, ինչպես և առաջնակարգ արձակագիր, մինչդեռ Տերյանը մեզ ներկայանում է միայն իբրև քնարերգու», «Կարելի է հիշել տաղաչափական բնույթի տարբերությունները» (ն. տ., 85), «Երկու բանաստեղծներն էլ ունեն որոշ գործեր, որոնք նրանց գրելակերպի տարբերությունների խտացումն են» (ն. տ.), «տարբերությունները պայմանավորում են բանաստեղծներից յուրաքանչյուրի երկերի ինքնօրինակությունը կամ ինքնատիպությունը» (ն. տ., 86) և այլն: Քաղվածքները կարելի է շարունակել, բայց դա հոգվածիս մի զգալի մասի արտագրությունը կլինի, թեև հոգվածում չեմ խոսել Թումանյան և Տերյան ստեղծագործողների բոլոր տարբերությունների մասին, քանի որ շափազանց շատ են դրանք, ամեն տողում, ամենուրեք և պարզապես անհամար է այդ տարբերությունները ցույց տալու համար շատախոս լինել: Վերը բերված քաղվածքների մեջ ընդգծել եմ տրամագծորեն տարբեր-ը, հակադիր-ը, շատ տարբեր-ը, որպեսզի ավելի պարզ լինի կարծիքս երկու բանաստեղծների տարբերությունների մասին:

Եվ այսպես, եթե ընդդիմախոսս վեճ է բացել ապացուցելու համար, որ Թումանյանը և Տերյանը իրարից տարբեր բանաստեղծներ են, յուրաքանչյուրն ինքնօրինակ, ապա կարծում եմ իզուր ջանքեր է թափել, քանի որ հակառակն առող չկա (և անտարակույս է, որ նման անհեթեթ բան ասող մարդ առհասարակ չի լինի):

Ավելի քան երեք մեծագիր էջերում (137—140) հոգվածագիրը խոսում է այն մասին, որ ամեն մի մեծ գրող ինքնօրինակ կամ ինքնատիպ է լինում: Անվանի մարդկանց երկերից քաղվածքներ է բերում այդ հանրահայտ և ինքնօրինական հասկանալի միտքը «ապացուցելու» համար: Կա՞րողյոք որևէ մեկը, որ հակառակն ասի: Կարծում եմ՝ ոչ: Ինչ վերաբերում է հոգվածիս, ապա նրանում բարեբախտարար այդ մասին էլ մի քանի անգամ ասված է, ահա որոշակի մի ձևակերպում. «Խոշոր բանաստեղծը խոշոր է նաև իր ինքնօրինակությամբ, և եթե երկու խոշոր բանաստեղծներ իրար նման են գրում, կնշանակի նրանցից մեկը ինչ-որ չափով խոշոր չէ, քանի որ կրկնող է» (ԹՂ, 76): Ի դեպ, այս քաղվածքը ընդդիմախոսս բերել է՝ ավելացնելով. «Կարիք չկա՞ր

հիշելու հենց իր «շմարտացի պնդումը» (ՊԲՀ, 157): Բայց սա ոչ իմ «պրն-դումն» է և ոչ էլ առհասարակ պնդում է, այլ հանրահայտ ու սովորական ճշմարտություն, որը, կարծում եմ, այսօր ապացուցելու կարիք չկա, այն էլ՝ բազում մեջբերումներով:

Ընդդիմախոսս ինձ լրջորեն մեղադրում է մեծ գրողների ասույթները թե-րագնահատելու համար: Իրականում գրածս հետևյալն է. «Երբեմն Թումանյանի և Տերյանի ստեղծագործությունների համեմատման ժամանակ գրականագիտ-ները հենվում են նրանց այս կամ այն հոգվածում կամ նամակում հայտնված մտքի, ժամանակակիցների հուշերի վրա և այլն», «Ինչ խոսք, բանաստեղծի հրապարակախոսական ու գիտական ժառանգությունը օգնում է րմբոնելու նրա ճաշակը, գրական հակումները, աշխարհայացքը ու դրանով էլ ինչ-որ չափով նպաստում հասկանալու նրա արվեստը: Սակայն որոշ դեպքերում էլ դա բա-նաստեղծին հասկանալու խաբուսիկ ճանապարհ է դառնում, երբեմն չափից ավելի կարևորություն տալով ստեղծագործողի կողմից հոգվածներում կամ նամակներում հայտնված մտքերին, մենք սխալ ենք գնահատում ամենակա-րևորը՝ նրա արվեստը» (ԹՀ, 79, ընդգծումները նոր են): Ընդդիմախոսսույթյան մեջ այս առթիվ է գրված. «Եվ սկսվում է գրողների, ընդ որում մեծ, նաև հան-ճարեղ («ներանցը» նշանակում է Թումանյան և Տերյան) գիտական, գրակա-նագիտական ժառանգության (հոգվածագիրը ավելացնում է նաև «հրապարա-կախոսությունը, նամակները») կարևորության անտեսումը» (ՊԲՀ, 143), «Կա-րիք կա՞ր դրա համար այդքան հեռուները մաշել և ըստ էության քերականա-տել անցյալի մեծ արվեստագետների մեղ համար այնքան թանկ ասույթները, նրանց անկշռելի հարուստ ժառանգության այդ մասը» (ՊԲՀ, 143, 144, ընդ-գծումներն իմն են): Եվ այսպես, «Ինչ խոսք, օգնում է ըմբռնելու»-ն, «Սակայն որոշ դեպքերում»-ն ու «երբեմն չափից ավելի կարևորություն տալը» ընդդի-մախոսս ներկայացրել է իբրև անտեսում, քերականացում, և ինքն էլ հան-դես եկել «մեծ արվեստագետների» անկշռելի հարուստ ժառանգության այդ մասը՝ ինձնից պաշտպանողի դերում: Ի դեպ, նշանավոր բանաստեղծներին (Թումանյանին, Իսահակյանին, Տերյանին, Չարենցին և այլոց) ինձնից պաշտ-պանելու կեցվածքը ակնհայտ է ամբողջ ընդդիմախոսություն մեջ (հատկա-պես՝ էջք 140, 143, 144, 145, 148, 157): Սա ընթերցողին դուր գալու հին հնարանք է, որը, սակայն, եբբեք չի օգնել հարցերի պարզաբանմանը: Օրի-նակ, Չարենցի մասին այսպես է ասված. «Մեղ համար անհասկանալի է, թե ինչ իրավունքով են Չարենցին վերագրվել նրա ասածի ոգուն հակառակ մրտ-քեր և ապա նրան, նաև ուրիշներին ներկայացվել բանաստեղծական արվեստի միայն մակերևույթը տեսնելու և խորքը չթափանցելու մեղադրանք» (ՊԲՀ, 143): Հոգվածիս մեջ իրոք խոսք կա գրական երկերի խորքը չթափանցելու, միայն մակերևույթը դիտելու, այդ երկերը ոչ թե ըստ նրանց վերլուծության. այլ ըստ հուշերի, նամակների, գրականագիտական հոգվածների գնահատելու մասին, սակայն հոգվածը կարգացողի համար դժգոհար չէ տեսնել, որ խոսքը վերաբերում է ոչ Չարենցին, ոչ էլ անորոշ «ուրիշների», այլ իրեն՝ ներկա ընդ-դիմախոսիս, որի անունը և քննադատված գիրքը ուղղակի նշված է տողատա-կին (ԹՀ, 77): Տեսնենք, թե ինչպես է ինձնից «պաշտպանում» մյուս մեծ գրող-ներին: Ա. Իսահակյանը իր հուշերում բերում է Թումանյանի հայտնած բանա-վոր կարծիքը «Մթնշաղի անուրջների» մասին: Ես էլ հենց այդպես գրել էի. «Ա. Իսահակյանի հուշերում Թումանյանը Տերյանի «Մթնշաղի անուրջների»

մասին ասում է...» (ԹՀ, 80) և ապա հուշերից բերել էի Թումանյանի խոսքերը: Ընդդիմախոսս սա համարելով լուրջ վիրավորանք Ա. Իսահակյանի և Հ. Թումանյանի հասցեին՝ գրում է. «Այժմ մի կարևոր հարց. ինչո՞ւ է Թումանյանի ասվածը դիտվում հուշ» և ավելացնում է. «Զե՞ որ Իսահակյանը բերում է Թումանյանի խոսքը (պահելով նույնիսկ կոլորիտը «Հա, է, շատ դրուստ ես ասում» և այլն) և ցայսօր ոչ ոք այն կասկածի տակ չի առել: Այո՞, հիշում է Իսահակյանը, բայց հիշում է Թումանյանի խոսքը՝ զարմանալի ճիշտ նաև մյուս մասերում: Ուրեմն խոսքը հուշի մասին չէ, այլ Թումանյանի խոսքի» (ՊԲՀ, 145): Ի՞նչ կարելի է ասել այս պաշտպանականի առթիվ, թերևս միայն հիշեցնել, որ ինքն Իսահակյանը իր գրածը հուշ է համարել («Իմ հուշերից») և որ Թումանյանի խոսքերը նա վերհիշել է ու գրի առել 30 տարի անցնելուց հետո:

Ընդդիմախոսս շատ է գործածում «մեծեր» բառը և ամեն կերպ աշխատում է ցույց տալ սեփական նվիրվածությունը նրանց: Բայց արդյո՞ք նա պատշաճ ձև է ընտրել դրա համար: Հազիվ թե հաջողված լինի նաև՝ Թումանյանին մեծ տերյանադետ, Տերյանին էլ մեծատաղանդ թումանյանագետ հրաշակելու նրա միտումը. «Բնորոշ է, որ Թումանյանը դարձավ առաջին մեծ տերյանագետը և տերյանագիտության իսկական հիմնադիրը, իսկ Տերյանը՝ թումանյանագիտության հիմնադիրներից ամենից մեծատաղանդը» (ՊԲՀ, 157): Ի՞նչ կասենք արդյոք մեր երկու բանաստեղծները, եթե ծանոթանային իրենց հասցեին արված այս կարգի մեծարանքներին:

Ընդդիմախոսիս բանավիճնու այս յուրահատկությունները ցույց տալու, դրանք գնահատելու միջոցով է միայն հնարավոր քննվող հարցի իսկությունը պարզել, ազատել այն ավելորդ բեռից: Այդ յուրահատկություններից է նաև այն, որ հակառակ կողմի շարադրանքում տեղ գտած մի փոքր անշրջահայեցություն, որևէ անհաջող ձևակերպում ընդդիմախոսս հմտորեն (իրոք՝ հմտորեն) օգտագործում է և հարց դաբձնում, մտքեր զարգացնում... Մի օրինակ: Հոգևածումս կա այսպիսի պարբերություն. «Այդպիսով, արվեստագետի ստեղծագործությունը ճիշտ գնահատելու համար պետք է ամենից ավելի հենվել հենց այդ ստեղծագործության վրա: Ինչ վերաբերում է բանաստեղծի մասին մամանակակիցների հուշերին, ապա նույնպես ճիշտ չէ դրանք վճռական հիմք դարձնել, մանավանդ, երբ ստեղծագործության վերլուծումը չի հաստատում երրորդ անձնավորության հուշը» (ԹՀ, 80): Անշուշտ, վերջին միտքը արտահայտելու համար լավագույն ձևակերպումը չի տրված, ավելի լավ կլիներ նույն նախադասությունը կրավորականի փոխել («...մանավանդ, երբ երրորդ անձնավորության հուշը չի հաստատվում գրողի ստեղծագործության վերլուծությամբ»): Սակայն, կարծում եմ, եղած ձևակերպումից էլ հասկացվում է, թե խոսքն ինչի մասին է: Ընդդիմախոսս այդ առիթով գրել է այսպես. «Մենք ևս հուշերի մասին բազմաթիվ նկատառումներ ունենք և ճիշտ չենք համարում հուշերը «վճռական հիմք» դարձնելը, բայց չենք հասկանում դատաքննականին մոտեցող այն առաջարկի իմաստը, թե գրողի ստեղծագործության վերլուծումը պետք է հաստատվի երրորդ անձնավորության հուշով» (ՊԲՀ, 144): Այսինքն՝ սոսա՞ծս լրիվ շրջում է ու ինձ վերադրում բոլորովին հակառակ միտք, այն, ինչի դեմ գրել եմ: Լսյալ երբեք չհայտնված միտքը նորից հարց է դարձնում, դատադրություններ անում, մի բանի էջ հետո նորից անդրադառնում նրան («խոսք բաշխվեց Թումանյանի կամ Տերյանի ասածը «երրորդ անձնավորության» հու-

շուր հաստատելու մասին...» (ՊԲՀ, 147) և շարունակում է այդ կերպ տալիս թույլտվություններ ստեղծել:

Ընդդիմախոսս կարողանում է նաև հոգևածիս տարբեր մասերից կտորներ պոկոտել, իրար մոտ շարել՝ դարձյալ ընթերցողի վրա անհրաժեշտ տպավորություն թողնելու համար (օրինակ, այդպիսի 15 կտորներ են իրար կողքի շարված ՊԲՀ-ի 149-րդ էջում): Նույն նպատակով նաև ինքը ընդգծումներ է անում հոգևածիցս բերած այդ կտորներում առանց նշելու, որ ընդգծումներն իրենք են (նույն էջում կան այդպիսի 14 ընդգծումներ):

Կարելի է ուրիշ շատ օրինակներ բերել ընդդիմախոսիս բանավիճելու այս կարգի բնույթը ցույց տալու համար, բայց դա շատ տեղ կպահանջի, միայն կրկնում եմ՝ բանավիճի այդ եղանակը, որքան էլ հմուտ օգտագործվի, միայն հեռացնում է հարցի էությունից, բնավ չի նպաստում, այլ խանգարում է ճշմարտության հայտնաբերմանը:

Այժմ փորձեմ պարզել, թե ինչն է եղել հոգևածս գրելու շարժառիթը, որն է նրանում հայտնված հիմնական միտքը:

Հիշենք Թումանյանի հայտնի քառյակը.

Ոնց է ժպտում իմ հոգին
Զարին, բարուն, ամենքին.
Լույս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ձամփիս անմեկին:

Այս շորս տողում շատ բանով է բացահայտվում բանաստեղծի ներքին էությունը, և ընդունված է այս քառյակը համարել բնորոշ Թումանյանի ստեղծագործության համար (ի դեպ, քառյակների հոբելյանական հրատարակության ձևավոր շապկին մեծագիր տպված է հենց այս քառյակը, որ, անշուշտ, նշան է, թե հրատարակիչները նույնպես այն համարել են շատ հատկանշական բանաստեղծի համար): Կարծում եմ հարկ չկա կարծիքներ բերելու ցույց տալու համար, որ Թումանյանի հոգու ձառագայթող ժպիտը, ուղղված շարին, բարուն, ամենքին, նրա սիրո ու ներման անհունության արտահայտությունն է, նրա ստեղծագործության գլխավոր արժանիքներից մեկը (եթե ոչ ամենագլխավորը): Եվ առնվազն ճիշտ չէ ընդդիմախոսս, երբ այս մասին պրում է. «Իսկ մի՞թե սեր ու ներում չեն երգել աշխարհի գրեթե բոլոր մեծ սիրերգականները» (ՊԲՀ, 156): Այսպես գրել նշանակում է շտաբերել «սիրերգական» սերը (կամ նման սեր երգելը) այն սիրուց, որը արտահայտված է Թումանյանի վերոհիշյալ քառյակում, և մի՞թե ճիշտ է Թումանյանին (նաև Տերյանին) «սիրերգակ» անվանել (մի՞թե նրանց, իբրև բանաստեղծների, գլխավոր հատկանիշը դեպի կինը տածվող սեր երգելն է):

Այդպես, իմ հոգևածում խոսք է եղել միայն այն սիրո մասին, որը ավելի է, քան դեպի կինը առաջացող (առհասարակ սեռերի տարբերությունից բխող) սերը, նաև ավելի է ու լայն ծնողների կամ զավակների, հարազատների, նույնիսկ հայրենիքի նկատմամբ մարդու ունեցած սիրուց: Տարբերելու համար այն անվանել եմ «խոր մարդասիրություն», համընդհանուր սիրո զգացում» (ԹՀ, 92), «ինքնազոհաբերման ու ներումի զգացողություն» (ն. տ., 101), «Գթառատություն, եսասիրության մերժում» (ն. տ., 94) և այլն: Գուցե ճշգրիտ բնորոշում չեմ գտել, սակայն ամբողջ շարադրանքից, բերածս քառյակներից,

կարծում եմ, պարզ է, թե խոսքը ինչ սիրո մասին է և որ, համենայն դեպս, «սիրերգակության»-ը չի վերաբերում ասվածը:

Հիշենք թումանյանական նույն սերը տարբեր կողմերից արտահայտող այլ հատվածներ. «Ինչքան ցավ եմ տեսել ես, նե՛ց ու դավ եմ տեսել ես, ծա-րել, ներել ու սիրել,— Վատը լավ եմ տեսել ես»: Մի՞թե մարդկանց նե՛ց ու դա-վը տանելը, իր դեմ նենգողին ու դավ անողին ներելը, անգամ՝ սիրելը հատուկ է «աշխարհի գրեթե բոլոր սիրերգակներին»: Ի՛նչ, հատուկ չէ: Ավելին՝ դա աշ-խարհի քիչ բանաստեղծների ու արձակագիրների է հատուկ ու այդ քչերից է թումանյանը, և ով այդ սիրո էությունը չի ըմբռնում, նրա ուժը չի զգում Թու-մանյանի երկերում, նա, հավանաբար, Թումանյան չի զգում:

Ահա այդ, եթե կարելի է ասել, աշխարհզգացողության մի այլ արտահայ-տություն. «Ծով է իմ վիշտն, անափ ու խոր, / Լիքն ակունքով հաղարավոր. / Իմ զայրույթը լիքն է սիրով, / Իմ գիշերը՝ լիքն աստղերով»: Մտածե՞՛ր է արդյոք ընդդիմախոսս անափ վշտի մեջ անափ սեր ունենալու, ինչպես և անքնն, սի-րով լի «զայրույթի» մասին...

Թումանյանական սիրո մի այլ դրսևորում է «հաշտ ու խաղաղ մարդկու-թյան» երազանքին նվիրված քառյակը, նաև «Ոսկի քաղաքը» հերիաթը, նաև այն, բո «Ով իմանա՛ ուր ընկանք, Քանի օրվա հյուր ընկանք, / Սերն ու սիրտն էլ երբ չկա՝ / Կրակն ընկանք, զուր ընկանք»: Ապրելու բովանդակությունը բա-նաստեղծը միայն այդ մեծ սիրո մեջ է տեսնում: Սա մտածելակերպ է, աշ-խարհզգացողություն, որի տարբե՛ր դրսևորումները (կամ դրսևորումները տարբեր կողմերից) կան նաև մուս քառյակների մի շարքի մասում («Իմ սիր-տը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում», «Խալաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ», «Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի», «Կյանքս արի հրապարակ, ոտքի կոխան ամենքի» և այլն):

Այդ սիրո զգացողությունը առավել կամ պակաս չափով ապրում է Թու-մանյանի մի շարք այլ լավագույն գործերի մեջ: Այն առկա է նույնիսկ «Սա-սունցի Դավիթ» վիպերգում: Մշակման համար ժողովրդական դուցազնավե-պից բանաստեղծի կատարած ընտրությունն արդեն խոսում է այդ մասին: Մշակված ճյուղի շատ էարևոր դրվագը Թումանյանը դարձրել է Դավիթի և թըշ-նամի զորականի զրույցը. վերջինս հենց այդ մեծ սիրո ու ներման գաղափարն է դարգացնում և հայ դուցազնի մեջ էլ շարժում նույն զգացմունքը ու մեղմում նրա մոլեգնած զայրույթը իր երկիրն ասպատակող թշնամի զորքի նկատմամբ: Առանց սրա չկա Թումանյանի «Սասունցի Դավիթ»:

Նույն այդ զգացողության և փիլիսոփայության մի այլ արտահայտություն-նը գտնում ենք «Թմկաբերդի առումի» մեջ: «Գործն է անմահ, / լավ իմացեք»: Ի՞նչ գործը: Այս հարցին զրականագետները տարբեր պատասխաններ են տա-լիս, սակայն բանաստեղծն ինքը շատ հստակ է պատասխանել. «Ես լավու-թյան խոսքն եմ ասում, որ ժպտում է մեր սրտին», այսինքն՝ «Թմկաբերդի ա-ռումի» մեծ փիլիսոփայությունը ի վերջո հանգում է «այս անցավոր աշխար-հում» «լավության» գործին: Նույնի այլևայլ դրսևորումները առկա են այնպիսի բանաստեղծություններում, ինչպես՝ «Բարձրից» («Իմ էս մեծ սրտին՝ աշխարհ-քից էլ մեծ, / Անսահման աշխարհք և սեր ընդհանուր»), «Բրյուսովից» («Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝ / Թե ով ավելի ուժգին կը սիրի»), «Անուշի ալբո-մից» (դույզ ոտանավորները՝ «Սերը անհաղ սովի պես», «Իմ մուրաշը շատ էր շքեղ... Սերն ու բարին՝ / Կրաղ, / Անուշ»), «Իմ երգը» («Ծով բարություն, շնորհք

ու սեր ճոխ պարզե եմ առել վերուստ»), «Աղավնու վանքը», «Վրաստանի համար», «Նվեր Վրաստանի բանաստեղծներին», «Իմ Արփիկին», «Արփենիկի ալբոմից», «Ալլահի ղրկածը» և այլն: Նշենք նաև, որ այդ սիրո մասին բավական շատ մտածումներ են տեղ գտել նաև բանաստեղծի նամակներում ու հոդվածներում (հիշենք հայոց ճակատագրի մասին ասած հայտնի խոսքը. «Ինչ որ լավ բան է լինելու, լինելու է սիրով, իսկ սրով՝ երբեք»³, կամ Տ. Տաբժեհին ուղղած նամակը. «Կարելի է, երբ գեղարվեստի մարդը աստվածային սիրո և հղբայրության զգացմունքի փոխարեն ատելության ու շովինիզմի կիրքն է բորբոքում մարդկանց սրտերում», «Ես միայն սեր ու բարի ցանկություններ ունեմ ամենքի համար» (ԹՀ, 399):

Էական է նշել նաև, որ տանկու, ներելու, սիրելու, ուրիշի մեջ իր նմանին կամ իրեն տեսնելու, նենդողին ու դավողին բարություն մատուցելու մասին Թումանյանը (Դեմիտրիյանի խոսքով ասած՝, «ներքին Թումանյանը») ավելի շատ սկսել է մտորել կյանքի վերջին վեց-յոթ տարիների ընթացքում, երբ այդ մտածումն ու զգացողությունը նրա ստեղծագործությունների մեջ ավելի են բյուրեղանում: Հասկանալի է, որ այդ աշխարհզգացողությունը ամբողջ Թումանյանը չէ (մեծ բանաստեղծն ունի նաև ուրիշ կարևոր արտահայտություններ), սակայն, թվում է, անվիճելի է, որ այն Թումանյանի էական հատկանիշներից է, առանց որի չկա Թումանյան: Այդ հատկանիշի մասին մտածելիս է, որ հայ նոր գրականության մյուս ականավոր դեմքերից ամենից ավելի ուշադրություն են գրավում Տերյանն ու Մեծարենցը:

Հարց է առաջանում նաև՝ եթե իրոք Թումանյանի և Տերյանի ստեղծագործությունների մեջ, խորքում ընդհանրություն կա սիրո, մարդասիրության վերոհիշյալ բնույթի տեսակետից, արժե՞ այն գրականագիտական հարց կամ հարցադրում դարձնել: «Հարց է առաջանում,— գրել էի հոդվածումս,— ընդհանրապես արժե՞ և արդյոք ճիշտ է գրականագիտական քննության նյութ դարձնել միևնույն ազգի բանաստեղծական արվեստի երկու խոշոր ներկայացուցիչների ստեղծագործական ընդհանրությունների հարցը» (ԹՀ, 76): Եվ շատ կուզենայի, որ ընդդիմախոսս նախքան ամեն ինչ բացատրողի, ամեն բան իր տեղը դնողի սլաշտոն ստանձնելը՝ փորձեր ավելի հանդարտ մտորել այս հարցի մասին, խորամուխ լինել նրա մեջ: Հարցի գրականագիտական հետաքրքրությունն առաջանում է այն բանից, որ մի կողմից ունենք իրարից շատ տարբեր (այո՛ւ, տրամագծորեն տարբեր), նույնիսկ հակադիր ստեղծագործողներ, մյուս կողմից, ինչպես ստորև կփորձենք ցույց տալ, այնպիսի ներքին, խորքային հոգեհարապատկություն, որպիսին, իմ համոզմամբ, չկա մեր նոր շրջանի որևէ ուրիշ երկու խոշոր բանաստեղծների մեջ:

Նորից հիշենք Թումանյանական բնորոշ «Ոնց է ժպտում իմ հոգին չարին, բարուն, ամենքին»-ը ու անցնենք Տերյանին. «Սի՛րտ իմ, բաց ես աշխարհի և չարի դեմ, սի՛րտ իմ, բաց, Աշխարհն՝ արև, աշխարհն՝ ամպ, սի՛րտ, աղբյուր ես դու զուլալ...», «Ու որպես արևն արդար ու առատ խավար աշխարհում,— Սիրտդ հրահրուն Թող ժպտա պայծառ, խնդուն, անարատ՝ չարին ու բարուն»: Լերդո՞ք սա վերը ներկայացված զգացողության (ու մտորման) դուտ տերյանական, Տերյանի քնարին բնորոշ արտահայտությունը չէ, և արդյո՞ք դժվար

3 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 105:

է զգալ նրա ներքին, էական հարադատությունը Թումանյանի համար բնորոշ համարվող վեֆոֆիշյալ քառյակին:

Սակայն այդ սիրո, աշխարհի, բարու, նաև շարի դեմ սիրտը անարատ սիրով բանալու զգացողությունը Տերյանի ստեղծագործության մեջ մեկ-երկու հատվածում երևան գալով չէ, որ ավարտվում է: Նրա տարբեր դրսևորումները իբրև ամբողջական դիմ անցնում է «Մթնշաղի անուրջներին» սկսած մինչև 1919 թ. վերջին բանաստեղծությունները, և դա էլ, ըստ երևույթին, կարելի է համարել «ներքին Տերյանին» բնորոշ մի հատկանիշ:

«Մթնշաղի անուրջներում» արդեն այն արտահայտվում է իբրև, Տերյանի բառով ասած, անշար լինելու տրամադրություն. «Ես կանգնած եմ լուռ, անշար է հոգիս, Թախծս խաղաղ, անուրջի նման. էլ չեմ անիծում ցավերը կյանքիս, էլ չեմ տրտնջում վիճակիս համար»: Նույնիսկ բնության մեջ բանաստեղծը զգում է այդ. «Խաղաղ-անշար է, պայծառ, գեղեցիկ Անտրտունջ նինջը մահացող օրվա»:

Շատ յուրահատուկ է, խիստ տերյանական այս անշարությունը, որ կազմում է բանաստեղծի խառնվածքի անկասկածելի մասը, և նրա տարրերը Տերյանի մեջ ավելի վաղ են եղել, քան իբրև բանաստեղծ ձևանշվելը: Վերը բերված քաղվածքները նախապես 1906-ին տպված «էլեգիայից»⁴ են (ըստ Պ. Մակինյանի՝ գրված 1903-ին): Այս զգացողությունն է, որ բազում մտորումների զուգընթաց զարգացել է «ներքին» Տերյանի մեջ: 1911-ին ունենք՝ «Մարութ է իմ հոգին, ու հիմա օրհնում եմ վիճակս երկրային, Բնդունում եմ սիրով կյանք ու մահ, Ու սիրտս պարզում եմ աշխարհին ... Անշար է իմ հոգին ու հանգիստ...»: 1912-ին՝ «Ընդունում ես աշխարհը բոլոր, — օրհնում ես, օրհներգում ու սիրում» և ապա «Առավոտը», որ տերյանական այդ զգացողության շատ վաղ արտահայտություն է. «Ողջունել սիրով անց ու դարձողին, Օրհներգել կյանքը, աշխարհին ժպտալ, Հարադատ լինել ջրին ու հողին, Եվ անհուն սիրով սիրել ու գթալ...»:

Ահա այս անհուն սերն ու նույնքան անհուն գթասրտությունը նաև կյանքում միակ հենարանն են թվում բանաստեղծին, և նա էլ (հիշենք Թումանյանին) կյանքն անիմաստ է համարում առանց դրանց. «Եթե սեր չկար՝ ինչի համար Պիտի շարչարվեմ շար աշխարհում...»: Բայց այդ սերը (նորից հիշեցնեմ, որ սա սիրեցական սերը չէ) նա, այնուամենայնիվ, գտնում է աշխարհում. «Հոգիս բացված է ծաղկի սման, իմ սերը խորն է և անսպառ, Չէ՞ որ լոկ սերն է, սերն է վահան, Եվ սիրտն է, սիրտն է սրտին ասպար...»: Եվ ապա՝ «Պիտի բանաս սիրտդ բորբոք ամեն սրտի դեմ, Պիտի լինես միշտ հրահրուն և միշտ լուսեղեն: Եվ սնոտի օրերի մեջ պիտի վառվես որսվես ջահ, Որսվես բարիք ընդունես միշտ և՛ տանջանք, և՛ մահ...»:

Այսպես երկար կարելի է շարունակել Տերյանի անշարության, սիրո և ներման յուրահատուկ փոխստփայությունը հաստատող քաղվածքները: Ավելի ցանկացնա, որ բանաստեղծը այդ մասին մի շարք անգամ խորհրդածել է նաև նամակներում (օրինակ, 1907 թ.՝ «Բայց քանի գնում, այնքան ավելի ու ավելի եմ համոզվում, որ միայն սիրով կարելի է անել ամեն ինչ, առանց սիրո՝ ոչինչ»⁵, 1909 թ.՝ «Այժմ ես սովորել եմ շատ բարձր գնահատել «մարդկային»

⁴ Առաջին տարբերակում «խաղաղ-անշար»-ի փոխարեն՝ «ինչքան անշար է»:

⁵ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, Երևան, 1963, էջ 170:

սերը, սերը մարդու նկատմամբ և ոչ՝ սեռի, նույնիսկ պատրաստ եմ այդ մարդկային սերն ավելի բարձր դասել սեռերի տարբերությունից բխող, սովորական սիրուց, որը սակավ դեպքերում է լինում գեղեցիկ ու խոր»⁶ և այլն)։

Տերյանի ստեղծագործության մի կարևոր հատկանիշը կազմող վերոհիշյալ զգացողությունն ու խոհը, կրկնում եմ, բնույթով էլ, բանաստեղծական արտահայտությամբ էլ խիստ տերյանական են, սակայն և խորքում շատ հարապատ թումանյանական (դարձյալ խիստ թումանյանական) վերը ներկայացված աշխարհզգացողությանը։ Հոգվածի սահմանները թույլ չեն տալիս խորանալու բանաստեղծներից յուրաքանչյուրի այդ աշխարհզգացողության ու մտածումի յուրահատկությունների մեջ, բայց, կարծում եմ, նրանց էական հարադատությունը ակնհայտ է, իսկ տողերիս գրողի կարծիքով մեր նոր գրականության մեջ ուրիշ ոչ մի երկու մեծ բանաստեղծ այս զգացողության ու խոհի տեսակետից իրար այսքան հոգևորապես չեն, որքան Թումանյանն ու Տերյանը։

Լավ է թե վատ այդ փիլիսոփայությունը կամ, եթե կարելի է ասել, աշխարհընկալումը, սա այլ հարց է, կարելի է մերժել, քննադատել կամ ընդունել այն և կամ նրա առանձին կողմերը։

Վերը շարադրվածից, կարծեմ, ակնհայտ է նաև, որ խոսքս, այսպես կոչված, գրական ազդեցության կամ ընդօրինակման մասին չէ բնավ։ Ընդգիմախոսս այս դեպքում էլ սխալ է ներկայացրել ասածներս։ Պարզ գրել էի. «Զգուշացնենք, որ խոսքը չի վերաբերում ազդեցությունների հարցին՝ ոչ մեկի ազդեցությանը մյուսի վրա, ոչ փոխադարձ ազդեցություններին» (ԹՂ, 77)։ Եվ, այնուամենայնիվ, ընդգիմախոսս «պաշտպանում է» Տերյանին ինձնից այն բանի համար, որ իբր ես գրել եմ, թե նրա վրա կա Թումանյանի ազդեցությունը, իսկ ամփոփման մեջ գրել է, որ իբր հոգվածումս «вопреки неоспоримым фактам и прямым высказываниям Туманяна и Теряна им приписаны такие и столь многочисленные общности—подражания...» և այլն։ Այս «բազմաթիվ ընդհանրություններ և ընդօրինակումներ»-ից Տերյանին «փրկելու» համար է, որ նա գրում է. «Մի՞թե այսպիսի բանաստեղծն ու մտածողը (Թումանյանը— ի. Բ.) չէր կարող որոշել՝ Տերյանն ի՞ր աշխարհի բանաստեղծ է, թե ոչ։ Ինչո՞ւ ուրեմն անտեսել նրա հայտնի խոսքը. «Իմ ազդեցությունը բնավ չտեսա այնտեղ»։

Մինչև այժմ ոչ ոք Տերյանին չի համարել Թումանյանի «աշխարհի» բանաստեղծ և ոչ էլ «անտեսել» է Թումանյանի ասածը։ Ինչ վերաբերում է հոգվածիս, ապա այստեղ շատ կտրուկ մերժված է ոչ միայն Թումանյանի, այլև Խաչակյանի ազդեցությունը Տերյանի վրա, չնայած այս վերջինը շատերը (այդ թվում ընդգիմախոսս) ընդունում են. «Մեր պատկերացմամբ,— գրված է հոգվածումս,— «Մթնշաղի անուրջների» և Տերյանի ամբողջ ստեղծագործության վրա չկա ոչ Թումանյանի, ոչ Խաչակյանի, ոչ էլ Դեմիրճյանի ազդեցությունը. այս իրողությունը փաստում է ինքը՝ Տերյանի ստեղծագործությունը և հազիվ թե այս բանն այժմ որևէ մեկը վիճարկի» (ԹՂ, 80)։ Ի՞նչ կարիք կար այն, ինչ իրոք ասել եմ, մի կողմ դնել և ամբողջը վերածել նույնացումների, ազդեցությունների ու ընդօրինակումների պարզունակ հարցի։ Կամ ի՞նչ կարիք կա ջանքեր թափել ապացուցելու, որ տխրությունը, պատանեկան երազանքների խորտակումը, մենության զգացումը, անբավարարությունը իրա-

⁶ В. Терян, Непозданные письма, Ереван, 1970, էջ 105։

կանոթյունից, հայրենասիրությունը և այլն հատուկ են ոչ միայն Թումանյանին ու Տերյանին, այլ նաև բազում ուրիշներին: Կա՞րգայոթ մի գրագետ մարդ, որ շիմանա այս հասարակից հասարակ ճշմարտությունը: Ընդդիմախոս ուղում է ցույց տալ, որ ևս հենց այդ միակ մարդն է, որ չգիտեմ այդ հասարակ բանը և գիտական լուրջ կենցվածքով հերքում է իբր իմ մտքերը: Նա հույժե և արդարացում ունենար այդ անելու, եթե հոգվածումս չլինեին այսպիսի տողեր. «Իրոք, տխրությունը, վիշտը թեև շատ քնարերգուների է հատուկ, և կարելի է ուղղակի ասել, որ առանց տխրության խորունկ քնարերգություն չի՝ նեկ չի կարող...» (ԹՂ, 87), «Ասացինք, որ վիշտն ու տխրությունը հատուկ են շատ քնարերգուներին: Անբավարարությունը իրականությունից, պատանեկան հույսերի և պատկերացումների խորտակումը անողորմ կյանքում վշտացրել են անցյալի ոչ քիչ աղնիվ հոգիների, այդ թվում շատ բանաստեղծների» (ԹՂ, 89) և այլն: Թերևս անպատշաճն այն է, որ գրել եմ այս պարզ և հասկանալի բանի մասին, բայց ահա նույնիսկ ուղղակի գրելուց հետո հնարավոր է լինում ամենը զլխի վրա շուռ տալ:

Իրականում, Թումանյանի և Տերյանի վերոհիշյալ հոգեհարադատությունն ուրորտը թափանցելու համար հակիրճ դրել էի նաև նրանց այն ընդհանրությունների մասին, որոնք նաև շատ շատերին են հատուկ և այդպես էլ շեշտել էի:

Այդպիսի ընդհանրություններից է նաև խոհր մահվան, ինչպես նաև, Թումանյանի բառերով ասած, Անհունի, Անհայտի, Հեռվի մասին: Շատերն են մտածել դրանց շուրջ, գրել, բանաստեղծել, բայց և տարբեր լուծումներ են տվել այդ առեղծվածին: Ո՞րն է թումանյանական լուծումը: Կարծում եմ, որ մեր բանաստեղծի «Տանել, ներել ու սիրելը», «չարին ու բարուն ժպտալը» հենց նրա Դեպի Անհունը գնալու և հայացքը վաղուց Անհայտին ու Հեռվին հառելու հետ է առնչված: Մի՞թե դժվար է նկատել, որ «մութ սահմանում», «Աստեղային երազների աշխարհներում», «Հեռուներում անարատ», «Անճառ Միսի», «Տիեզերքի մեծ Հոգու» հետ լինելով է բանաստեղծը այնքան իմաստուն դառնում, որ այդ շատ շատերին անհասանելի բարձրից աշխարհին նայելով մտորում է, որ «դատարկ են էնպես» «և փառքը, և գանձ, և՛ քեն, և՛ նախանձ»: Ահա շատերի նման տխրող, վշտացող, մենակ զգացող Թումանյանը շատերի պես չի դառնանում, չի տոգորվում ատելությամբ, ոչ էլ ցասումով ու վրեժով է լցվում, այլ իր բաբժրից իջնելով աշխարհ, դայրույթը բարությանը լցրած, գիշերը՝ աստղերով՝ անհունության ու սիրո իր խոսքն է ասում հայ գրականության մեջ: Կրկնում եմ, կարելի է քննադատել Թումանյանի այս փիլիսոփայությունը կամ նրա որոշ կողմերը, սա այլ հարց է, բայց սա Թումանյան ստեղծագործողի էության մի բնորոշ կողմն է: Անհունի մեջ թափանցող նրա հայացքը և նրա սիրո ու ներման փիլիսոփայությունը նույն աշխարհզացողության՝ տարբեր կողմերն են:

Գուցե իր նկատմամբ ավելի մեծ ուշադրություն է պահանջում Տերյանի ստեղծագործությունը՝ նկատել տալու համար, որ մահվան ու, բանաստեղծի բառերով ասած, «Հավիտենության», «խորհրդավոր դյուխող խավարի», «մութ հավերժության» մասին խոհր և սիրո ու ինքնազոհաբերման փոխվող նրա անշարժությունը նույնպես միևնույն տերյանական աշխարհզացողության երկու կողմերն են:

Տերյանին, «Մթնշաղի անուրջներից» սկսած, շատ քնորոշ է եղել որոնումը («Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում, կա իմ հոգու մեջ մի անհագ ծա-

րալ», «Վհատ սոսկումի տալնապով կղզաս,— Դու որոնածդ երբեք չես գըտնի...», «Իմ հոգին ունի խենթ որոնումի տալնապներ գաղտնի» և այլն), որը մինչև վերջ էլ մնաց նրա ստեղծագործությունը հատուկ, և ահա. «Որոնումիս էսպակածների անտառում, Ուր հոգնաւոռնջ սիրտս թուլ էր ու հիվանդ, Տեսա ուղին, տեսա կյանքի ուղջ հեռուն»:

Որոնումը, մութ հավերժության մասին մտորելը, նորից եմ կրկնում, հատուկ են շատ շատերին, բայց լուծումներն են տարբեր: Տերյանի այդ որոնումին միաձուլվում են նրա խոհերն այն մասին, որ «Մենք բոլորս, բոլորս մաշկալանք անտառում խավար» և սեփական անձի անգործության դժգոհությունը («Խոնարհ եմ ես որպես հող»): «Եվ ես անօդ, ես անօդ որպես մի մանուկ», «աշխարհի դեմ, շարի դեմ ողբակեղ եմ, զոհ» և այլն), որոնք և հանգուտ են իր նման «որք մանուկներին», «Բոլոր մարդկանց շար ու բարի» սիրելու ու ներելու մտածումին. «...Եկեք բոլորդ՝ որք ու անգոր, Ես էլ անգետ եմ, մոլոր ձեզ պես, Մոլոր ու որք եմ շարիքի դեմ, Բայց միշտ ձեզ հետ եմ, եղբայր եմ ձեզ, Ձեզ պես անգոր եմ, ձեզ պես անգեն»:

Եվ ահա այս դժգոհությունամբ և հավիտենության որոնումների մեջ է, որ դոյանում է տերյանական բանաստեղծությունների վերոհիշյալ բնորոշ գիծը՝ «Մութ հավերժության դառնությունն զգալ եմ թախծել անհուն և անշար լինել...», ու այստեղ էլ Տերյանը բացականչում է, որ չի ուզում ունենալ՝ «Ոչ անուն, ոչ զենք, ոչ փառք, ոչ արծաթ», նաև՝ «Ոչ հարստության և մեծության բեռ, ոչ ապարդյուն փառք...»: Սա արդեն բարձրից նայող խորունկ փիլիսոփայականաստեղծ է, որին պետք է հասկանալ. «Ժիշ հանեցի սիրով լուսեղեն, Աղաղակեցի օրհներգու ձայնով, Սիրտս նետեցի քարին ու ջրին, Խառնեցի հուրիս աստղերի երգին, Պարզեցի կյանքս պարզ ու խնդագին Հավիտենության, Հավիտենության...»:

Ինչպե՞ս կարելի է չզգալ ձևերի ու մտածողության տերյանական մեծ ինֆլուենականության մեջ նաև ներքին մեծ հաբաղատությունը Անհունի ու սիրո թումանյանական աշխարհդժգոհության հետ:

Տերյանը հայ գրականության ամենից ավելի փիլիսոփայականաստեղծներից է (մեր գրականագիտությունը կարծես չի ուզում «նկատել» այս): Միայն շատ յուրահատուկ է արտահայտվում այդ փիլիսոփայությունը, այնպես, ինչպես երաժշտության մեջ: Տերյանի երգերը երաժշտական են արտաբուստ և ներբուստ: Արտաբուստ (որի մասին շատ է գրվել)՝ բաղաձայնովն է, առձայնեությամբ, ուժեղ հանգերով, նաև ներքնահանգերով, շափով, իսկ ներքինը (որն ամենաէականն է) այն է, որ Տերյանի շատ բանաստեղծություններ կամ նրանց առանձին հատվածներ, սովորական դատողական-տրամաբանական խոսքով չեն կառուցված, բառերն ու նախադասությունները նախապես ավելի շատ զգացմունք, տրամադրություն են գոյացնում, քան միտք (հիշենք «Աշխարհի մեղեդին», «Սենտիմենտալ երգը», «Կարոտելը», «Մոռանալ, մոռանալը» և այլն): Հաճախ այդ տրամադրության ու զգացմունքի մեջ է տերյանական խոր փիլիսոփայությունը, այսինքն՝ անմիջականը, առաջինը տրամադրությունն է. այն պետք է լիովին զգալ, ամբողջովին տոգորվել նրանով, և միայն այդ ժամանակ է բացվում տերյանական խոհի անհունը, այն ժամանակ հասկանում ենք մեր մեծ փիլիսոփային:

Հայրենասիրությունը Կարծեմ չկա հայ բանաստեղծ, որի երկերում որևէ կերպ այն տեղ գտած չլինի: Բայց հայրենասիրությունը անջատ չէ բանաստեղծի մյուս զգացողություններից ու խոհերից, նրա ստեղծագործական խառնուրդի մեջ: Արդյոք Թումանյանի և Տերյանի հայրենասիրական քնարի մեղեդիները Անհունի ու Հավիտենականության, սիրո ու ներման վերը նկարագրված զգացողության ու մտածումի հնչյունները չե՞ն կրում իրենց մեջ:

«Ո՞ր երկրի սրտում թախիժ կա այնքան, Եվ այնքան ներում, ո՞ր երկրի սրտում»: Այսպես է Տերյանին պատկերվում երկիր նաիրին: Արդյո՞ք սա վերը նկարագրված նույն Տերյանը չէ, նույն այն խոհն ու զգացողությունը՝ միայն հայրենի երկրի վերաբերմամբ ասված: Ահա դարձյալ. «Սիրենցի հեղ, անքն հոգիդ», «Դու հպարտ չես, իմ հայրենիք, տրտում ես դու և իմաստուն», «Դու կամավոր դո՛հ», «Հրկեղ քո հոգին, որպես առատ խունկ, աշխարհի համար պարզեցիր անպարտ», «Զարության գեմ վեհ սիրտ միշտ, վատի դեմ աղնիվ», — արժե՞ շարունակել և ասել, որ սա խիստ տերյանական հայրենասիրություն է, այն օրերին ավանդական դարձած մարտական հայրենասիրությունից շատ հեռու: Փորձենք մտածել, թե անցյալի մեր մեծ բանաստեղծներից է՞լ որի հայրենասիրությունն է այս կերպ դերձ ուղմական շնչից, անցյալ փառքի դովերգումից և տոգորված ժողովրդի ներքին, հոգևոր հատկանիշների նկատմամբ այս կարգի սիրով ու մեծարումով: Եվ արդյո՞ք Թումանյանի ամենաբարի ու ամենաներող ժպիտն ու սերը տեղ չեն գտել նրա հայրենասիրական քնարի մեջ: Ինչպե՞ս կարող էին տեղ չգտնել, երբ բանաստեղծը հայացքը Անհունից կտրելով է, որ դարձնում է հայրենիքին («...վաղուց թեև իմ հայացքը...») Թումանյանական հայրենասիրության մեջ նույն «ծով բարություն, շնորհք ու սեր ունեցող», աշխարհին իր «Բարձրից» նայող բանաստեղծն է: Եվ նա էլ հայրենիքի «խնդուն փառքով, անցյալ ու հին փայլով» բնավ չի շլանում, նա հայրենիքի ճակատին տեսնում է տանջանք ու թախիժ և «խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ», «Ու հույսերը համակ ազնիվ, լիքը բարով ու լուսով», «Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում շարաղետ, խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին...»:

Սա է Թումանյանի հայրենասիրությունը, իսկ նրա մի երկու՝ մարտական Լրանգունի ունեցող գործերը, որոնք, եթե չիմ սխալվում, Թումանյանական ուժը և բնույթը չունեն, ծնունդ են հանգամանքների ու ավանդույթի: Հայ նոր դրականության այդ ավանդույթը՝ անցյալ փառքի վերհիշումով, հատուցման ու ցասման հնչյուններով, որ ստեղծվել էր ու ստեղծում էր այնպիսի մեծ տաղանդների քնարով, ինչպիսիք են Աբովյանը, Պատկանյանը, Պեշիկթաշլյանը, Նալբանդյանը, Բաֆֆին, Սիամանթոն, Վարուժանը և ուրիշներ, իշխում էր Թումանյանի ու Տերյանի ժամանակներում հայտնի ու անհայտ շատ բանաստեղծների երկերի մեջ: Այդ ավանդույթը այս կամ այն կերպ արտահայտվել է նաև Հովհաննիսյանի, Ծատուրյանի, Իսահակյանի երկերում: Հիշենք Ծատուրյանի և Տերյանի հայրենասիրական բանաստեղծությունները՝ տպագրված 1915 թ. «Մշակի» միևնույն համարում (№ 1). ինչպես առաջինին՝ ավանդականին («Հայրենիքի ձայնը») ծափահարում էին, իսկ Տերյանի գրածների («Երկիր նաիրի» շարքից) առթիվ՝ տարակուսում: Եվ մի՞թե չի զգացվում, որ հայ հայրենասիրական բանաստեղծության ամբողջական երաժշտության մեջ խոշոր երգիչներից երկուսի քնարներն առանձնանում են վերն արդեն ասված հատկանիշներով:

Գյուղի ու քաղաքի նկատմամբ վերաբերմունքի հարցը Թումանյանի վերաբերմունքը, կարծում եմ, տարակույս չի հարույցում. որքան էլ նրա երկերում չի ցույց են հանվել նահապետական գյուղի արատները, միևնույն է, բանաստեղծի, Ա. Տերտերյանի խոսքով ասած, հալածված և զրկված աշխարհի գյուղն է, իսկ քաղաքը՝ անխրաճ աշխարհ։ Արտաքուստ կարող է թվալ, թե Տերյանի համար հարազատ եզերք է քաղաքը, քանի որ նրա բանաստեղծություններում կարծես ավելի շատ քաղաքն է երևում և լեզուն էլ, ոճն էլ քաղաքային է, դերժ գեղջկական շեշտից։ Բայց դա արտաքին տպավորություն է։ Այո՛, որքան էլ զարմանալի թվա ընդդիմախոսիս, Տերյանը ոչ մի այնպիսի տող չունի, ուր քաղաքն իբրև այդպիսին երազանքի, բաղձանքի առարկա լինի, ինչպիսին է «հայրենի անուշ լեռնադաշտը», «հեռու մեր Գանձան», «մեր սարերն անառիկ, վեհանիստ, մեր արտերն արևոտ ու հանգիստ», «մեր սարերը ձերմակ» և այլն։

Որտե՞ղ է Տերյանը քաղաքի մասին հոգու խորքից նվիրական այնպիսի տողեր գրել, ինչպես. «Լիննի շորան սարերում հեռու, Գայիր անցնեիր վրանիս մոտով...» կամ՝ «Ու վառվեր հոգիս պարզ ու իմաստուն՝ իմ վրանի տակ, սարերի գրկում» և կամ՝ «Մեր գյուղն է՝ սարերը մերկ, մեր գետը բարակ միգուժ, զանգակը մեղմ ու բեկուն, Թախծում են արոտ ու հերկ»։

Ինչպե՞ս կարելի է ուսումնասիրել Տերյան բանաստեղծին և շղգալ, որ նրա էրգերի հիմնեղանակներից մեկը ամենասրտաբուխ սերն է հայրենի գյուղաշխարհի նկատմամբ, այդ աշխարհի այրող կարոտը. «Հովիվներն այնտեղ կրակ են արել, Սարերի վրա, — Օ՛, անուշ հեռու...»։ Եվ բանաստեղծը որքա՞ն անկեղծ է բացականչում. «Ա՛խ, սիրտս թռավ աշխարհն այն հեռու»։ Իսկ որտեղի՞ց թռավ, որտեղի՞ց է Տերյանը երազում գյուղը, որտեղի՞ց է ուզում փախչել, ազատվել. «Աշխարհից այս խավար ինձ տարեք, ինձ տարեք այս էրկրից անարեգ։ Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ, Մեր սարերն անառիկ, վեհանիստ, Մեր արտերն արևոտ ու հանգիստ»։

Հարկ կա՞ բացատրելու, որ այդ խավար, անարեգ աշխարհը ոչ մե՞ր գյուղն է. ոչ էլ վեհաճիստ սաբերը։ Գյուղական բնությունը՝ արտերը, անտառը, ուռենիները, դետակը, սարերը, իրոք, որ բանաստեղծի հոգեկան հանգստի հանգրվանն են եղել. «Նստում եմ մենակ կանաչ առվի մոտ, ուռիների տակ ու հոգնած սիրտս էլ չի դժգոհում», կամ՝ «Ես սիրում եմ արտերը ոսկի եվ դաշտերը պայծառ»։ Գեթ մի անգամ ասած ունի՞ Տերյանը այսպիսի ջերմ կարոտով ու պոռթկացող սիրով լի խոսքեր այն ժամանակվա քաղաքների հասցեին։ Ոչ մի տող, իսկ հակառակը՝ որքան ուղեք։ Ահա՛ «Սև քաղաքներում գիշերն է շնչում, տանջանքն է սողում սև օձի նման», «քաղաքում այս շար ու մեծ», «Սև ճիրաններդ, անհաղթ Բաբելոն», «Դու դաժանորեն նայում ես հեռուն», «ուր օրգիանների կոշմարն է խոսում», «Քաղաքնե՛ր, ձեր մեջ կա դժոխքի մի շշուկ, Քաղաքնե՛ր, ձեր բանտից արդյոք կա՞ վերադարձ», «Ջնդաններ ու բուրգեր շարությամբ անողոք», «Քաղաքնե՛ր, ձեր բանտում մեռնում են երգ ու սեր» և այլն։ Քաղաքներում է, որ «բոլորն էլ պաղ ու խորթ, և բոլորն օտար են», «կավալներն են զեշի կարոտ» (համեմատենք սարերում կրակ անող հովիվների հետ)։

«Այս է ժամանակի դրամատիրական քաղաքը Տերյանի պատկերացմամբ» (ԹՀ, 100), — գրել էի հոգեվածիս մեջ։ Ընդդիմախոսս բերում է հայտնի բառատողը՝ «Կրկնակի գալստյան զանգերն եմ ես լսում» և երկար խոսում է այն մասին, որ Տերյանը «տեսել է քաղաքում հասունացող «մրրիկը» (ՊԲՀ, 152)։

Արդյո՞ք նա կարծում է, թե դրանով ասպացուցեց, որ Տերյանը դրամատիզական քաղաքի նկատմամբ դրական վերաբերմունք է ունեցել և մի՞թե նա չի նկատում, որ իր բերած փաստարկները միայն հաստատում են բանաստեղծի բացասական վերաբերմունքը: Նա բերում է նաև «Գարնան քաղաքում» ոտանավորի տողերը. «Մայիի բարևը հարազատ են քեզ», հաշվի չառնելով, որ դա բնավ դրամատիզացիան Բաղրամի գով է, այլ պարզապես բանաստեղծին բնորոշ տրամադրության մի նորովի արտահայտությունն է («Ազատ է հոգիդ, անշար է և հեզ, Եվ տխրությունդ անուշ է հիմա»)՝ տողորված զարնանային պայծառությամբ:

Անշուշտ, գլուղաշխարհի նկատմամբ ջերմությունը, սերը նաև երկիր-Նաիրի նկատմամբ բանաստեղծի ունեցած հոգեկան ջերմության մի արտահայտությունն է, և դա ինչպես նաև դրամատիզական քաղաքի նկատմամբ վերջինից վերաբերմունքը, ինչ խոսք, միայն Տերյանին ու Թումանյանին չէ, որ բնորոշ են: Բայց որ դա Տերյանի ստեղծագործության մեջ անժխտելի փաստ է. և որ այդ ստեղծագործությունը չի կարելի ճիշտ գնահատել աչք փակելով բազմաթիվ ակնառու փաստերի վրա, կարծում եմ, անվիճելի է:

Գրել էի. «Միշտ չէ և պարտադիր չէ, որ միմյանց երկերի նկատմամբ մտերմական զգացում ունենան գրական նույն ուղղության կամ թեմաների, լեզվաոճական տեսակետից ընդհանրություններ ունեցող հեղինակները: Երբեմն հակառակն է լինում» (ԹՇ, 77): Այդ «հակառակից» էի համարել Թումանյանին ու Տերյանին, այսինքն՝ որ նրանք հիշյալ ընդհանրությունները չունենալով, փոխադարձաբար սիրել են միմյանց ստեղծագործությունները: Արդյո՞ք այս դեպքում դեր չի խաղացել այս երկու ստեղծագործողների միջև եղած հակայական, անհաշիվ տարբերությունների տակ թաքնված մի ներքին հոգևհարազատություն: Ընդգիմախոսս կտրականապես մերժում է այսպիսի որևէ հնարավորություն: Նա օրինակ է բերում Միլերին ու Բյոթին, որոնք իբրև ստեղծագործողներ շատ տարբեր լինելով բարձր են գնահատել միմյանց: «Բայց չէ՛» որ սա պարզապես շեղում է հարցից. նախ ո՞վ ասաց, որ Թումանյանի և Տերյանի ստեղծագործությունների խորքում եղած կամ անթաքրվող հոգևհարազատությունը վերացնում է այդ բանաստեղծների միջև եղած սովորական տարբերությունները, և ապա՝ ո՞վ է ասել, որ անպայման և ամեն դեպքում ներքին հարադատությամբ պիտի բացատրել երկու մեծ բանաստեղծների միմյանց տված բարձր գնահատականները: Ընդգիմախոսս լուրջան է մատնում Տելստոյի ու Հյուգոյի հիշատակած խնդիրը. գրական ուղղությամբ, կերպարներով, ամբողջ գրելակերպով չափազանց հեռու են այս հեղինակները, բայց դա չէր խանգարում, որ Տոլստոյը Ֆրանսիական ամբողջ գրականության մեջ ամենալավ վերջ համարեր «Թշվառները»⁷ (և ոչ թե դրական ուղղությամբ, գրելակերպով իրեն ավելի մոտ հեղինակների, ասենք, Բալզակի կամ Ֆլոբերի որևէ վերջ): Արդյո՞ք սա Տելստոյի ու Հյուգոյի միջև եղած ստեղծագործական շատ լուրջ, բազմաթիվ տարբերությունների տակ թաքնված որևէ փոխադարձ հարադատությամբ չի բացատրվում:

Ընդգիմախոսս երկար է գրում Տերյանի նամականու մեջ եղած մի արտահայտության մասին և, հենվելով նրա վրա, անառարկելի է համարում, որ Թումանյանի ստեղծագործությունը Տերյանին միանգամայն օտար է եղել

7 Л. Толстой, Полное собр. соч., т. 30, М., 1951, էջ 71

(ՊՐԶ, 143—148): Ձարմանում ես. ինչպե՞ս է, որ ընդդիմախոսս չի խորհել հետևյալի մասին: Ամբողջ հայ դրակալություն մեջ ոչ մի հեղինակի Տերյանն աշխարհի բարձր չի գնահատել, որքան Թումանյանին: Նույնիսկ «Գալիք օրը» վեկուցման մեջ, ուր ամենախիստ, հաճախ ծայրահեղ խոսքերն են ասված անցյալի ու իր ժամանակի հայ գրականության մասին (ներառյալ Նաղարյան, Պատկանյան, Շահապիլ, Ծատուրյան, Լեո, Փափաղյան, Ահարոնյան, բոլոր հեթանոս երգիչները, Մխիթարյանները և այլն)⁸, հանկարծ անհրեշտակալի ունեցած բարձր է գնահատում Թումանյանին⁹ («արդեն վարպետ է ամեն կողմով», «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգման» և այլն), իսկ մի «Փարվանան» ավելի բարձր է դասում հայ բանաստեղծական մի ամբողջ ուղղությունից, որն ունի գեղարվեստական խոսքի մեծ վարպետներ: Ոչ մի հայ հեղինակի ստեղծագործության մասին Տերյանը բանաստեղծական աշխարհի անկնդծ ու ջերմ խոսքեր չի ասել, որքան Թումանյանի, որի երկերում էր նա դգում «սիրտ դեգերուն, հոգի հրակեղ», «հայրենի խինդ ու ժպիտ և հայրենի վիշտ»: Մի՞թե այսպես են արտահայտվում միանգամայն օտար բանաստեղծի մասին: Եթե Տերյանի ոչ միայն ամենաբարձր գնահատականին, այլև ամենաջերմ խոսքերին արժանացած հայ բանաստեղծը նրան միանգամայն օտար էր, ուրեմն ո՞վ էր հայ գրողներից նրան գոնե մի քիչ հարազատը, այդ դեպքում առհասարակ հայ գրականությունից ի՞նչն է եղել նրան հարազատ:

Փոխանակ մի փոքր խորհելու այս մասին՝ ընդդիմախոսս մատը ամուր փնտռում է մի տեղ Տերյանի կողմից գործածված միանգամայն օտար բառերի վրա և ոչինչ չի ուզում լսել՝ Տերյանը գրել է ու վերջ: Երբ զգուշացնում ես, թե բանաստեղծի դուտ անձնական, հրապարակելու համար չգրված ամեն բառից և արտահայտությունից չի կարելի այդպես կառնել (ԹԶ, 79—81), ընդդիմախոսս «բարձր» խոսքեր է ասում «նվիրական անունների», նրանց ամեն մի բառը պաշտելու, նրանց նամակների «և այլ գրառումների» կարևորության մասին և այլն: Եթե իրոք թանկ ենք գնահատում Տերյանի նամականու ամեն մի բառը, ապա շատ ավելի ուշադիր պետք է վերաբերվենք այդ նամականու բոլոր մասերին: Տերյանն իր նամակների մեջ բազմիցս է հիշում Թումանյանին և նրանցում բազմաթիվ ջերմ խոսքեր կան գրված Թումանյանի ստեղծագործության մասին. «Երևի կարդացի Թումանյանի «Ալլահից զրկված»-ը «Հորիզոն»-ում: Հրաշալի է և՛ բովանդակության, և՛ ձևի տեսակետից: Շատ, շատ հավանեցի»¹⁰: Ինչպե՞ս Տերյանը կարող էր այսքան հավանել միանգամայն օտար մի հեղինակի գրածը և մանավանդ այն դեպքում, երբ նույն Տերյանը, «իշտ նույն ժամանակ նամակների մեջ հայ արձակը որակում էր իբրև «բոլորովին անպետք», «շատ իլլուսի ու աղբալ»¹¹ և ուշադրության արժանի մի պատմվածք անդամ չէր գտնում հայ շատ անվանի հեղինակների երկերում¹²: Դարձյալ նամակներում է Տերյանը հիացմունքով խոսել «Տրտմության սաղմուսների» մասին¹³, նամակներում է, որ Տերյանը Թումանյանին պարզապես

8 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1925, էջ 129—159, 182—186:

9 Նույն տեղում, էջ 157—158, 177:

10 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 235:

11 Նույն տեղում, էջ 399, 388, նաև՝ 404:

12 Նույն տեղում, էջ 367, 384, 404 և այլն:

13 Նույն տեղում, էջ 387:

համարում է իր սիրելի բանաստեղծը¹⁴ (արդյո՞ք միանգամայն օտար բանաստեղծը սիրելի է լինում) և այլն: Տերյանի խոսքի նկատմամբ հարգանքը, այդ խոսքի մանրամասն ճննությունը թելադրում են մի բան, որ հայ նոր դրականության ներկայացուցիչներից քանիսի նկատմամբ էլ բանաստեղծը օտարություն զգացողություն ունեցած լինի, Թումանյանի նկատմամբ անտարակույս հաստատ նման բան ունենալ չէր կարող, բայց և՛ իսկական, բնորոշ, իմաստուն Թումանյանի և ոչ թե նրա որևէ ոչ բնորոշ կամ անմշակ երկի նկատմամբ:

Մյուս կողմից մի՞թե ձիշտ կլինի, եթե դասականների խոսքի նկատմամբ մեր տածած հարգանքի մասին հավաստումներով քողարկենք այն ճշմարտությունը, որ դասական գրողն էլ սուրբ չէ, մահկանացու է, սխալուկան և անձնական որևէ տպավորության տակ շտապ գրած նամակի մեջ կարող է գործածել անզգույշ, տվյալ հարցի մասին իր մտածելակերպը ստույգ չարտահայտող բառեր: Ով կարդացել է Տերյանի նամականին, նա չի կարող չհիշել այն բազմաթիվ դեպքերը, երբ բանաստեղծը զգուշացնում է, որ չստացվեց այն, ինչ ուզում էր գրել, որ «նամակում ամեն բան «տեղովը» չես ասի, և թյուրիմացություն կարող է դուրս գալ»¹⁵, «...հավաս շունեմ երկար նստել եմակ գրելու և կշռադատելու ամեն մի նախադասությունը — ախր հենց դրա համար էլ նամակ է»¹⁶, «նեքեքեք, որ նամակս գրված է այսքան թափթփված և այնպես ոչ թարմ ու անհեթեթ»¹⁷, «Բանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի զրույց, իսկ ընկերական և մտերմական զրույցի ժամանակ խոսքեր չես ընտրում և չես աշխատում խոսել տրամաբանորեն ու «խելոք»...»¹⁸, «նամակում գրածիս համար ոչ ոք իրավունք չունի ինձ պատասխանատվության կանչելու»¹⁹. «նամակը պետք է միայն այն մառդը կարդա, ում գրված է»²⁰, «Սույն նամակը արդեն ըստ սովորականի թվում է անհեթեթ և հիմար: Բայց այս անգամ ուզում եմ հաղթահարել ինքս ինձ և նամակն ուղարկել...»²¹, այսպիսի կարելի է երկար շարունակել: Եվ արդյո՞ք գրականագետը չպիտի հարգի նաև Տերյանի այս խոսքերն ու իր պառտքը համարի տարբերել գրողին բնորոշը պատահականից, որևէ առիթով ասածից:

Դառնանք խնդրո առարկա նամակին: Այն գրվել է նվարդ Թումանյանին, անթվակիր է, բայց բովանդակությունից (Մ. Գորկու նախաձեռնությամբ կազմվող ժողովածուի մասին գրածների բնույթից) հաստատ կարելի է ասել, որ գրվել է 1915-ի աշնանը (հատորում նշվել է՝ Խոկտեմբեր): Խոսքը հետևյալ պարբերությանն է վերաբերում. «Իվան Ֆադեևիչի վերջին «Հատված»-ը (պոեմից) կարգացի, օժբողջն անմշակ է (ինչպես և նախազգուշացրել է հեղինակը), մի բանի կտորներն ալվու են և լավ: Այս մասին շատ երկար պետք է խոսել. նամակով գրելու բան չէ, համենայն դեպս Թումանյանի գրած ամեն մի տողը ինձ համար հետաքրքրող է և նշանակալից, թեև իբրև պոետ ես ինձ

¹⁴ Նույն տեղում, էջ 362:

¹⁵ Նույն տեղում, էջ 297:

¹⁶ Նույն տեղում, էջ 298:

¹⁷ Նույն տեղում, էջ 301:

¹⁸ Նույն տեղում, էջ 348:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

²¹ Նույն տեղում, էջ 375:

միանգամայն օտար եմ զդուս նրան, այսինքն՝ նրա պափոսը իմ պափոսը չէ՝ ևս նրան երկրպագու եմ և սիրում եմ, բայց նրա աշխարհն իմ աշխարհը չէ (հուսով եմ, լիակ չեք ըմբռնի ինձ— սրանով ես չեմ ուզում ժխտել նրա մեծությունն ու նշանակությունը, հասկանում եք ինձ, նույնը կարող էի ասել, օրինակ, մի Շեքսպիրի մասին)»²²։ Այստեղ, անշուշտ, ճշմարտության մոտ մտքեր կան (տարբեր աշխարհների ու պաթոսների մասին), բայց ամենն այնպես է ասված, որ զգացվում է արտահայտման խստություն և նամակագրի ներքին դժգոհություն։ Ու թեև Տերյանը շտապում է վերապահություններ անել («սրանով ես չեմ ուզում ժխտել նրա մեծությունը»), թեև հասցեատիրոջը՝ Թումանյանի դուստրին նաև հավաստում է իր երկրպագությունն ու սերը Թումանյանի նկատմամբ, բայց խոսքի մեջ թափանցած դժգոհությունը Թումանյանից՝ ակնհայտ է. ինչ-որ բան Տերյանի սրտով չի եղել, և գրիչը գրել է անդամ. «Ես ինձ միանգամայն օտար եմ զդուս նրան»։ Դժգոհության պատճառը և տվյալ պարբերությունը գրելու շարժառիթը, հասկանալի է, որ պետք է եղած լինի նոր կարդացած հատվածը պոեմից («ամբողջն անմշակ»)։

Նորից հիշենք Տերյանի ասածները իր նամակների մասին և ուշադրության առնենք նաև այս նամակի մեջ ասվածը. «Այս մասին շատ երկար պետք է խոսել, նամակով գրելու բան չէ», «Ինչեք, սա երկար բան է...»։ Եվ ապա վերջում կա գրված. «Նամակս շատ խառն ու շփոթ դուրս եկավ և բազմագույն... բայց կուղարկեմ, որովհետև եթե շուղարկեմ, ներք չի գրվի և էլի ուշ պատասխան կստանաք»²³։

Պարզ է, որ Տերյանը նույնիսկ նույն պահին (դժգոհության) իր գրածը չի հավանել և կարող էր այն շուղարկել։ Եթե մի քանի օր հետո Տերյանը նորից գրեր նամակը արդյո՞ք միանգամայն-ը և օտար-ը ու մյուս կտրական մտքերը կկրկներ։ Արդյոք գրականագետը չպե՞տք է մտմտա, որոնի, թե ի՞նչն է պատճառը, որ «Փարվանայով», «Անուշով», «Տրամոսյան սաղմոսներով», «Ալլահի ղրկածով», «Պողոս-Պետրոսով» և մյուս զուտ թումանյանական գործերով միշտ անկեղծորեն, լիասիրտ հիացող Տերյանը այս մի անգամ այսպիսի ներքին դժգոհությամբ է գրել սիրելի բանաստեղծի մասին։ Գրել էի. «Տերյանի մտքերը հայտնված են ինչ-որ վիպերգի անմշակ հատվածի կապակցությամբ, որ բանաստեղծը հավանած չի եղել և գրել է այդ տպավորության տակ» (ԹՀ, 81)։ «Ինչ-որ»-ը, անշուշտ, նշանակում է նաև, որ խոսքը ոչ բնորոշ, գուցե և ոչ լիարժեք թումանյանական երկի մասին է։ Լ՛նդդիմախոսս գրում է. «Ի՞նչ «ինչ-որ վիպերգի» մասին է խոսքը, մի՞թե դժվար է իմանալ, որ խոսքը «նոր հոսանք»-ում (1914 թ., № 4) տպված «Հավարան բլբուլի» «Երգչի վիշտը» հատվածի մասին է, որի մեջ Տերյանը գտնելով մի քանի «ազդու և լավ կտորներ», «ամբողջը» համարում է անմշակ» (ՊԲՀ, 146)։ Ո՛չ, անհնար է։ Այդ հատվածը Թումանյանի լավ ու բնորոշ գործերից է, Տերյանը նրա ընթերցումից չէր կարող այդպես դժգոհն ու հիշյալ պարբերությունը գրել։ Եվ իրոք, պարզվում է, որ ընդդիմախոսս սխալվել է։ Նախ պետք է ուշադրություն դարձնել, որ Տերյանը նամակում գրել է. «Իման Ֆադեիչի վերջին «Հատվածը» (պոեմից) կարգացի», որ նշանակում է, թե նոր լույս տեսած «Հատված» է կարգա-

²² Նույն տեղում, էջ 406։

²³ Նույն տեղում, էջ 407։

ցել և այդ նորություն մասին է, որ հայտնում է իր կարծիքը՝ Հարց է առաջանում, ինչպե՞ս կարող էր 1915-ի աշնանը Տերյանը այդ կերպ գրել 1914-ի գարնանը (այսինքն՝ տարիուկես առաջ լույս տեսած մի երկի մասին։ Այնուհետև, նամակում ասված է. «Ամբողջն անմշակ է (ինչպես նախազգուշացրել է հեղինակը)...»։ «Նոր հոսանքի» հիշյալ համարում, ուր տպված է «Նրզի վիշտը», հեղինակի այդ կարգի որևէ ծանոթություն կամ նրա կողմից արված որևէ նախազգուշացում չկա։ Այնտեղ միայն խմբագրության կողմից ասված է. «Տպում ենք մեր անվանի բանաստեղծ Հովհ. Թումանյանի այս փոքրիկ հատվածը իր մի անավարտ արեւելյան պոեմից, որն ինքնին մի սիրուն ու ամբողջական գործ է։ Խմբ.»։

Անկասկած է, որ Տերյանի խոսքը այս հատվածի մասին չէ։ Այն կարող էր ասվել մի ուրիշ հատվածի մասին, որը՝ ա) պետք է լույս տեսած լինի 1915-ի աշնանը և բ) ունենա հեղինակի «նախազգուշացումը» գործի անմշակության մասին։ Այդպիսին է «Հորիզոնի» 1915-ի հոկտեմբերի 29-ի (№ 243) համարում տպագրված հատվածը «Հին կոիլը» պոեմից՝ «Տանը» վերնագրով։ Այստեղ կա նաև հեղինակի ընդարձակ ծանոթագրությունը, որի մեջ հրապարակվող հատվածի մասին ասված է. «էս սեագրությունն է, որ աղջիկս է գտել»։

Այսպիսով, ոչ թե «Հաղարան բլրուից»։ այլ «Հին կոիլը» պոեմից հրապարակված հատվածը կարդալու առիթով է Տերյանը վերահիշյալ խոսքերը գրել²⁴։ Եվ որքան էլ կարեւոր թվան Տերյանի վերապահումները («մի քանի կտորներ ազդու են և լավ» և այլն), միևնույն է, ասվածի ընդհանուր բնույթից զգացվում է, որ նա հատվածը ամբողջությամբ չի հավանել ու շատ դժգոհ է մնացել նրանից։ Դրա մի պատճառը կարող էր լինել հատվածի իրոք անմշակ (սեագիր) վիճակը, բայց և հաղիվ թէ դա եղած լինի այդպիսի մի դժգոհության գլխավոր շարժառիթը։ Տերյանի ստեղծագործության, հոգվածների ու նամականու մեջ խորամուխ լինելու դեպքում երևի դժվար չէ հասկանալ, թե ինչն է այդ չհավանելու, դժգոհելու գլխավոր պատճառը։ «Հին կոիլը», որ նախապես գրվել է 1890-ական թթ. և ավարտվել 1902-ին, նվիրված է Թումանյանի ստեղծագործության համար ոչ սովորական մի հարցի՝ արեւելահայերի հայդուկային կոիլներին Արեւմտյան Հայաստանում, և տեղ-տեղ մարտաշունչ երկ է։ Լավ է այդ, թե վատ, բայց փաստ է, որ Տերյանը իր ժամանակակից այդպիսի երկերի (նաև նշանավոր հեղինակների գրած) նկատմամբ բացասական վերաբերմունք է ունեցել, այդպիսի գործերն անվանել է «մեր ղոչինների ստեղծած»²⁵, «վայրենի շախսեական դրականություն»²⁶, «շախսե-վախսեական տաճկահայ կյանքից»²⁷ և այլն։ Սա, կարծեմ, հանրահայտ է։ 1908 թ. Ավ. Իսախանյանին՝ նրա «Նրգեր ու վերքերի» երկրորդ հրատարակության առթիվ գրած նամակում, գովելով բանաստեղծին ընդհանրապես, Տերյանը չի կարողանում չհայտնել իր դժգոհությունն ու բացասական կարծիքը նույն դրքում տպված մարտական-հայրենասիրական բանաստեղծությունների մասին («...մի քանի

²⁴ Ուրեմն և նամակը կարող է զրված լինել հոկտեմբերի 29-ից հետո, նոյեմբերի սկզբին (մինչև որ թերթի համարը Ինքնիսից հասնի Պետրոպոլս) և ոչ հոկտեմբերին, ինչպես նշել է հատորի կազմողը։

²⁵ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 429։

²⁶ Նույն տեղում։

²⁷ Նույն տեղում, էջ 402. Նաև՝ էջ 429, 431 և այլն։

բանաստեղծություններ շուրհիստական ոգով, որոնք, ինչպես Զիշտ նկատեց Ֆոլակը, ուղղակի աղտոտում են քո սքանչելի գիրքը»²⁸։

Կարծեմ հասկանալի պետք է լինի Տերյանի բացասական վերաբերմունքը նաև «Հին կովից» նոր կարդացած հատվածի նկատմամբ (հիշենք այդ հատվածի հիմնականակը՝ «Կանցնենք թափով Սարերն ամպոտ, Կերթանք խմբով Մենք նրանց մոտ» և այլն)։ Եվ այդ այն օրերին էր, երբ Տերյանը հատկապես խիստ էր արտահայտվում այս բնույթի գրականության մասին²⁹։ Սա էլ անհնչելի իրողություն է։ Ահա այդ ժամանակ «Հին կովի» հատվածը կարգալույց անմիջապես հետո է, որ Տերյանը գրել է վերոհիշյալ տողերը։

Վերն ամբողջ ասվածը նկատի առնելուց հետո արդյոք իրավունք ունենք այդ «միանգամայն օտար»-ը մատի փաթաթան դարձնելու, դրա համար «պատասխանատվության կանչելու» բանաստեղծին (հիշենք՝ «նամակում դրածիս համար ոչ ոք իրավունք չունի ինձ պատասխանատվության կանչելու»)։

Ընդդիմախոսս իր ամբողջ հոգվածում զարգացնում է մի դրույթ, ըստ որի մեծ գրողները միմյանցից տարբերվում են ոչ թե գաղափարներով, փիլիսոփայությամբ, մտքերով, այլ դրանք արտահայտելու ձևով (ՊԲՀ, հատկապես՝ 150—151), որ Թումանյան, Տերյան, Սիամանթո, Իսահակյան, Ստ. Զորյան, նաև Աբովյան, Շեքսպիր, Շիլլեր, Բյոթն «և շատ ուրիշներ» նույն գաղափարներն ու մտքերն են արտահայտել միայն տարբեր եղանակներով, ձևերով։ Կարծում եմ ամեն մի մեծ գրողի ամենակարևոր տարբերիչ հատկանիշը նրա մտածողության, աշխարհընկալման առանձնահատկություններն են, ապա նոր՝ դրանք արտահայտելու խոսքային, ոճային, թեմատիկ և այլ կարգի յուրահատկությունները։ Ամենը միասին կազմում են մի գրողի «աշխարհը» (այս բառը ընդդիմախոսս շատ է գործածում, թեև չի փորձում այն բացատրել)։ Բայց էականը ինքնուրույն մտածողությունն է, առանց որի չկա մեծ բանաստեղծ։ Երևի ընդդիմախոսս հաշվի չի առել այս, ինչպես և այն, որ կան դեպքեր էլ, երբ իրենց ինքնուրույն մտածողությամբ աչքի ընկնող երկու խոշոր արվեստագետների ստեղծագործության մեջ (նրանց տարբեր «աշխարհներում») լինում է որևէ ներքին, էական հոգեհարազատություն, որը արժանանում է գրականագետների ամենալուրջ ուշադրությանը, քանի որ դրանով գեղարվեստական գրականության առանձնահատկություններին վերաբերող շատ կարևոր հարցեր են պարզվում։

ПО ПОВОДУ ВОПРОСА «ТУМАНЯН—ТЕРЯН»

Р. А. ИШХАНИЯН

(Р е з ю м е)

О. Туманян и В. Терян—это два глубоко индивидуальных, самобытных армянских поэта, различия между ними очевидны, а некоторые стороны их творчества (например, характерные черты языка и стиля, литературного направления и т. д.) противоположны. По мнению автора,

²⁸ Նույն տեղում, էջ 184։

²⁹ Նույն տեղում, էջ 402, 422, 425, 428—429, 437, 439, 441 և այլն։

это не может вызывать споров. Вместе с тем автор считает, что проблема «Туманян—Терян» интересна потому, что, несмотря на ярко выраженную индивидуальную особенность творчества каждого из них, в глубине их творческих миров таится родство, заключающееся в специфике гуманизма обоих этих представителей новой армянской поэзии.